

ԳԵՎՈՐԳ ԿԱԿԱԲԵՆՑ ԳՈՐԵՑԻ (ԺԸ ԴԱՐ) ԵՎ ՆՐԱ ՏԱՂԵՐՆ ՈՒ ՃԱՌԵՐԸ

Ինչպես Հայտնի է, վրաց աղբյուրները, սկսած ԺԱ-ԺԲ դարերից, երեսման արձագանքել են Վրաստանի ֆեռալական միապետության և Վասպուրականի հայոց Արծրունյաց տան և վանի (իմա՝ Աղթամարա) Խաթողիկոսական Աթոռի փոխհարաբերություններին:

Օրինակ, ԺԱ դարի սպատմիլ Մմբատ՝ Դավթի որդին, իր «Քարթլիի մատյան» կոլված երկում, ի միջի այլոց, նշում է, թե ինչպես վրաց թագուած Դ արքայի օրոք (1027—1072), 1046 թ., «զի մայր նորա [Մարիամ] գուստը էր Սիենեցիմայ հայոց արքայի¹, ետուն զքաղաքն Անի բնակիչք նորա ի թագուհի Մարիամ²»:

«Թագակիրների պատմականն ու գովասանքը» երկի անանուն հեղինակը, որը Թամար թագուհու (1184—1213) պալատական պատմիլն էր, խոսելով սույն թագուհու օրոք, հավանական է 1197—1204 թվականներին, թբիլիսիում կայացած վրաց-Հայկական համատեղ եկեղեցական ժողովի մասին, նշում է, որ այդ ժողովին, ի թիվս այլ անձնավորությունների, ներկա էին վկարողիկուն Վանայ (իմա՝ Աղթամարա—Լ. Մ.-Բ.)³

1 Ընդգծումը պատեղ և ստորև բոլոր մեջբերուակություններն էին և լ. Մ.-Բ.:

2 Լ. Մելիքսեթ-Բեկ, «Վրաց աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին», Ա, Երևան, 1934, էջ 206—207.

3 Այդ ժամանակա Աղթամարի գահակալի անունը վրաց պատմիլը շի տալիս հստ հայ աղբյուրների և այն անհայտ է (Մետոպ վեդ. Մաքսուպյանց, «Հաւաքարան կաթողիկոսաց Աղթամարայ», Եղմիածին, 1916, ներսես վեդ. Ակինյան. «Գաւազանագիրը կաթողիկոսաց Աղթամարայ» («Աղդամին մատենագրան», 22), Վիեննա, 1920, Մազարիս արքեպիսկոպոսան, «Աղդապատում», Գ, Երևանադեմ, 1927, էջ 228.:

նաև հայոց եպիսկոպոսներն՝ ու վարդապետները⁴:

ԺԴ դարի անգիտացի վաճառական և ճանապարհորդ Քարդիկայդը, որը 1590-ին այցելել է Արևելք, Հուղարի բնակիչներին անվանում է «Հայս և Վիրս, պարապեալս ի վաճառականութիւն մետաքսի և ալոց նիթոց», ինչպես վկայում է Հ. Պ. Ալշանը⁵:

Անտարակուս, հատուկ ուշագրության արժանի է ԺԹ դարի սկզբների (1805—1806) ֆրանսիացի ճանապարհորդ Պյեր Ամեդի Ժորժերի «Ուլգեգրությունը», ուր տրված է Վանա լճի շրջապատի նկարագրությունը և նըշված է, թե ինչպես 1806 թվականի օգոստոսին վիճակվեց իրեն աման գալ լճի կղզիները և այցելել վանքերն ու շրջակա քրիստոնեական հնությունները», Տալով Վարագա վանքի մանրամասն տեսությունը, Պ. Ա. Ժորժը մատնանշում է, նաև, որ այս վանքի «միաբանությունը բազկացած էր շորս կամ հինգ կորնավորից», Հաշված վանահորը, ումանք հայ, ումանք վրացի⁶:

4 Վրացերեն բնագրի տարբերակում «Ճաղպատ» ները, որը «Ճաղատեսիների աղավաղումը պիտի լինի»:

5 Լ. Մելիքսեթ-Բեկ, «Վրաց աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին», Բ, Երևան, 1936, էջ 17: Խոյնի «Վարդապետք հայոց հայսիսային կողմանց», Թբիլիսի, 1928, էջ 64—65, 221 (վրացերեն); Հմմտ. «Քարթլիս Ցխովրիբա» («Վրաց տարբերությունը»), Բ. Թբիլիսի, 1959, էջ 83, 573 (վրացերեն):

6 Հ. Պ. Ալշան, «Միսական», Վենետիկ, 1893, էջ 413:

7 «Ճաղատարհորդություն դեպի Հայաստան և Պարսկաստան, կատարված 1805 և 1806 թվականներին», Պ. Ամեն Ժորժի». Փարիզ, 1821, էջ 384 (ֆրանսերեն); Հմմտ. Հովին. Հակոբյան, «Աղթամարի Հայաստանի և Անդրկովկասի պատմության, Ողբերություններ, հատ. Զ. ԺԹ դարի առաջին բառամյակ (1800—1820), Երևան, 1934, էջ 286.

Քննարկելով Վարագա վանքի միաբանության կազմին վերաբերող Պ. Ա. Ժորերի ասծը, մէնք 1940 և 1955 թվականներին կասկած էինք հայտնել այդ մասին և առաջարկել «ոմանք հայ, ոմանք վրացի» վկայությունը մեկնաբանել «ոմանք Հայրից» (Հայւտանից), ոմանք Վիրքից (Վրաստանից)» իմաստով, կամ, ծայրահեղ դեպքում, վերջինների տակ «վրացանոս հայեր» (գուցե և հայադաշտական վրացիներ) հասկանալ⁸:

Այսպիսի եղրակացության հանգելու մեզ չիմք է տալիս, բարեբախտաբար, մեր տրամադրության տակ գտնվող Գևորգ Կակարենց Գորեցու կյանքին ու գործին վերաբերող նյութը:

1740—1765 տարիներին, երբ Վրաստանում, հատկապես Քարթիի մայրաքաղաք Թբիլիսիում և Կախեթի մայրաքաղաք Թելավիում հրապարակ էր իշել և ստեղծագործում էր հանրածանոթ Սայաթ-Նովան, նույն տարիներին Վասպուրականի Վանա լճի կրղիներից մէկում՝ Կտուց անապատում, անուն է հանում գրականության ասպարեզում Գևորգ վարդապետ Կակարենց (Կարավինց) Գորեցին 1740—1750 թվականներին:

Գևորգ վարդապետ Գորեցին ստեղծագործում էր երկու լիգվով՝ հայերեն և վրացերեն, օրինակ ունենալով Գրիգորիս Աղթամարցուն, որը ստեղծագործում էր երեք լիգվով՝ հայերեն, թուրքերեն և պարսկերեն։ Գևորգի ժամանակակից Սայաթ-Նովան ևս հորինում էր իր խաղերը երեք կամ նույնինսկ չորս լիգվով՝ հայերեն, վրացերեն, աղրբշաներեն-թուրքերեն և պարսկերեն, ինչպես նաև վերջինիս հետնորդ Շամշի-Մելքոն իր բանաստեղծությունները հորինում էր երկու լիգվով՝ հայերեն և վրացերեն։

Գևորգ Կակարենցի գրական գործունեության մասին որոշ գաղափար կարելի է կազմել այն զույգ ձեռագրերի հիման վրա, որոնք պահպանված են Վրաստանի Կենտրոնական ձեռագրատանը (Վրաստանի պետական թանգարանի նախկին ձեռագրական բաժին, ներկայում Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Զեռագրերի ինստիտուտում⁹)։

8 Ա. Մելիքսեմ-Թեկ, «Գևորգ Գորեցի ժք գարի առաջին կեսի վրաց և հայոց անծանօթ գրողը», «Տեղեկագիր Վրաստանի պետական թանգարանի», Ժ. Թբիլիսի, 1940, էջ 90 (վրացերեն, ուստարեն ամփոփումով); նաև մեր «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», Դ. Երևան, 1955, էջ 94։

9 Այս հիմնարկության հայերեն ձեռագրերի հավաքածուն, որը համուռ է շուրջ 200 միավորի և հավաք-

թրանցից մեկը, ըստ մեր ցուցակի № 45, Գևորգի ինքնաձեռագիրն է, բովանդակությամբ դավանաբանական բնույթի ժողովածու, զրված վրացերեն և մասամբ հայերեն, նաև բազմաթիվ հիշատակարաններ վրացերեն (էջ 145, 256, 275, 303, 328, 345, 361, 06—07, 017, 018, 075—076, 079 և այլն), զրված 1740, 1747, 1748 և 1750 թվականներին, որոնցից մեծ մասը 1748-ին է պատկանում։ Գրեթե բոլոր հիշատակարանները պարունակում են ինքնակենսագրական տվյալներ, որոնց հիման վրա հնարավոր է կազմել Գևորգի ծննդաբանությունը և որոշ շափով նաև կենսագրությունը։ Ժողովածուն նկարազարդված-պատկերագրադիմում է, թեև վերին աստիճանի պրիմատիկ կերպով։ Ծովովածուի գրության և ձևավորման տեղն է Կտուց անապատը։

Մյուս ձեռագիրը, ըստ վրացերեն ձեռագրացուակի № 368, աղոթագիրք է, արտագրված ոմն Թաղա Ղորգանի որդու (Ղորգանացվիլիի) ձեռքով Աստրախանում 1771 թվականին¹⁰։

Երկու ձեռագրերն էլ հիմնականում ընդգրկում են 1740—1750 թվականների միջությունը Գևորգ Կակարենցի կողմից թարգմանված նյութեր հայերենից վրացերեն։

Կակարենց (վրացերեն Կակարաւանթ, այսինքն Կաքավենց) ազգատոհմի ներկայացուցիչ Գևորգ վարդապետը ծնվել է Քարթիի (Արևելյան Վրաստանի) հինավուրց Գորի քաղաքում։ Նրա ծննդներն են եղել Ավթանդիլը և Միհրանդուխտը, որոնք ունեցել են, բացի Գևորգից, նաև մի տղա Դավիթ անունով և երեք աղջիկ՝ Թինաթին, Խանում և Ռուազամ, որոնցից վերջինը 1748 թվականի հիշատակարանում հիշվում է իբրև ննջեցյալ, իսկ մնացածները որպես ամուսնացած։

Վել էր 1921—1939 թվականների ընթացքում մասամբ մեր չանձերով, գեռես 1939 թվականին, Համամելութենական Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի հանձնարարությամբ մանրամասն ցուցագրեց Մեսրոպ Մագիստրոս արքեպիսկոպոսի «Թուցակ»-ի իր իսկ ձեռքով մերենագրած օրինատիւն։ Հիշալ զույգ ձեռագրերի, իրեն վրացատառ գրագրերի նկարագրությունը, այդ ցուցակի մեջ չմըտավ, ուստի և դրանց մանրամասն տեսությունը տվինք մենք (տե՛ս նախորդ ժանոթագրությունը)։

10 Հմմատ, «Թուցակ Վրաստանի պետական թանգարանի վրացերեն ձեռագրերի Թանգարանի ձեռագրերի նոր հավաքածու», Ա, Թբիլիսի, 1957, էջ 391—392 (վրացերեն)։

թացի դրանից, հիշատակարաններում տըրպած են Գևորգի պապի և տատիկի անունները՝ Զովար և Թիգնաթին, նաև մի շարք մտիկ ազգականների անունները՝ Խաթուն, Գասպար, Գաբրիել և այլն¹¹:

Գևորգը եղել է Եջմիածնի Հայրապետական Աթոռի սպասավոր (Կրոնավոր) կամ, ավելի հիշտն ասած, դրսի միաբան, պաշտոնավարելով 1740—1750 թվականներին Վասպորականի հայոց Կտուց անապատի (գուցե և Վարագա վանքի ևս) միաբանության շարքերում:

Մինչ 1740 թվականը, ինչպես և 1750 թվականից հետո, Գևորգ վարդապետի գործունեությունը մշուշի մեջ է:

Գևորգ վարդապետի կենսագրությունից հետաքրքիր է մի գիծ: Գտնվելով Վասպուրականում (Վան), Կտուց անապատ, Վարագանք և այլն), նաև սիրով հիշում է իր ժամանք Վրաստանը, Քարթին, Գորին: Եվ իրոք, Վարագա խալին նվիրված իր ընդարձակ սրտառուց տաղում, որ գրված է վրացերեն լեզվով, նաև մի-մի անգամ հիշում է Վրաստանն (տուն ե, տող 1—2) ու Գորին (տուն Զ, տող 3) և երկիցս Քարթին (տուն Զ, տող 2, տուն Ժ, տող 3):

ա

«Վրաստանից քեզ դիմեցի մեծ սիրով,
Երկար ճանապարհ անցա շատ
զրկանքներով»:

բ

«Ու էլ Քարթին կամա, թող հետը տանի քո
հողիցդ»:

գ

«Գորիից եկա այս լեռան վրա, կուզեմ
հոգվով ինձ ավետես»:

Իր ժողովածուի մի հիշատակարանում Գևորգ վարդապետը գրում է. «Կտուց անապատը քաղաք Վանի ծովամիջումն է, ուր ներկայում» գտնվում եմ ևս և գրում եմ այս գիրքը» (Էջ 303):

Իսկ մի այլ հիշատակարանում ասված է. «Հիշեցեք, սուրբ Եջմիածնի զավակներ, մեղապարտ և տրուպ Գևորգ վարդապետին, այս գրքի թարգմանչն» (Էջ 345):

Համեմատաբար ավելի նշանակալից է ընդարձակ հիշատակարանը պատմական տըրպյաններով հանգերծ, ուր, ի միջի ալլոց, ասված է. «...Հիշեցե՛ք այս գրքի գրողին՝ Գորեցի Կակարենց Ավթանդիկի որդի, մեղապարտ և բաղում տանջանքների արժանի Գևորգ վարդապետին. . . Քահանա լինիք թե աշխարհական, տղամարդ թե կին, հայ քե վրացի, բոլորդ արժանանաք ձեր մուրագին: Այս գիրքը գրվեց Վան անվանյալ քաղաքի

11 Մեր հոգվածը՝ «Տեղեկագիր Վրաստանի պետական Պանդարանի», Ժ, 1940, Էջ 96—98:

մոտերքում, ծովամիջի անապատում, ընդ հովանայավ սուրբ և մեծ Սկրտիլ Հովհաննու գերեզմանի, ի փառարանություն մի Աստուծությունների, ի վայելումն Հայաստանյայց Եկեղեցու զավակների, ի 436 [-1748] թվականության, բազում և ծանր վշտի պահին, երբ Վելինամադ անունով զահենին սպանեց իր եղբորորդին¹² և աշխարհը խառնվեց և այլ զահեններ նստեցին ու սկսեցին իրար սպանել. երբ Թիգիսի քաղաքի արքան, Քարթիլիի և Կախեթի տերը՝ մեծն Թեյմուրազ թագավորն Թավրիզումն էր զահենի մոտ, ուր գտնվում է և այժմ. և Աստված միշտ պահապան լինի նրան...» (Էջ 6—7):

Այլև. «Մեր սուրբ հայրերի վարքագրությունների գիրքը... թարգմանվեց հայերենից վրացերեն ի ժամանակս երկու թագավորությունների՝ Քարթիլիի և Կախեթի՝ մեծափառ արքա Թիեյմուրազի և նրա որդի Հերակլի¹³, նաև ի հայրապետության մեր Տյառն Ղազար կաթողիկոսի, ամենայն հայոց պատրիարքի և վանահոր (առաջնորդի) Սուրբ Էջմիածնի, ի ծեռն Գորեցի Կակարենց Ավթանդիկի որդի Գևորգ վարդապետի, ընդ հովանավ Սուրբ մեծ Կտուց անապատի, ի թվականության Տյառն Սյառն 1747, սեպտեմբեր ամսվա 10-ին: Գորվեց գիրքը քաղաք Վանի ծովամիշի անապատում. ամեն» (Էջ 18):

Զորկ չէ հետաքրքրությունից նաև այն, որ ժողովածուում զետեղված հայտառ տաղերից մեկը, որ նվիրված է Հովհան Ոսկեբերանին, Գևորգ վարդապետն ավարտում է այսպիսի տողով. «Տրուալ Թէորքիս բարեկասու լեռ», այսինքն ինքն իրեն անվանում է ո՛չ թի «Գևորգ վարդապետ», ինչպես վրացերեն

12 Խոսքը Թամազ-ղուկի խանին կամ Պարսից նաւար-շահն (1736—1748) է վերաբերում, որի մասին Ժարի հայ պատմի Խաչատուր արեղա Զուլայեցին («Խաչատուր արեղայի Զուլայեցոյ Պատմութին Պարսից», բ. սպ., աշխատասիրությամբ Թարգեն Վրդ. Աղավելանի, Վաղարշապատ, 1905, Էջ 257) գրում է. «...յորժամ ի 1182 [-1733] թուողն կացոյց թագաւոր ի վերայ Պարսից գլանուն Արաւ, յանձնամ փիփարկեաց զանուն իւր Թամազ ղուկի խան՝ Վէլինամատ. և ասաց յայնմէսուէ Վէլինամատ կոչել զանունն, և ո՛չ ևս կուկ մնաւ Թամազ ղուկի խանու Ալլե (Էջ 258). Ժիկ բաշամալսուկ զօրպագուի Պարսից Վէլինամատ այս է Թամազ ղուկի խան»:

13 Խնչպես այս, նույնպես և նախորդ հիշատակարանում Գևորգը ցուցաբերում է իր իրազեկ լիճներ Վրաստականի և հարեն կրթների քաղաքական դրույթն և 1748 թվականի անցքերին, երբ Քարթիլիում թագավորում էր Թեյմուրազ թ-ն (1733—1761), իսկ Կախեթում վերջինիս որդին՝ Հերակլ թ-ն (1744—1762), որը հնտագայում գարձակ միացյալ Քարթիլի Կախեթի թագավոր (1762—1798):

հիշատակարաններումն է, այլ բարբառային ձևով՝ «Քէորք»:

Գեորգ Կակաբենցի ժողովածուն բաղկացած է չորս գլխից:

Առաջին գլխի սկիզբը թերի է, սակայն պահպանված է ամբողջ գլխի ցանկը, որով հնարավոր է զաղափար կազմել նոր բովանդակության մասին, այսինքն կուահել, որ ժողովածուի սկզբնական մասը հատկացված է եղել Գրիգոր Տաթևացու քարոզներին:

Եւրոպի գլուխը պարունակում է նույնպես Գրիգոր Տաթևացու քարոզների շարունակությունը, որին կցված է այսպիսի հիշատակարան. «Ի փառաբանություն մի Աստուծու և ի վայելումն ուղղափառաց՝ Հայաստանյաց Կաթողիկե Մայր Եկեղեցու մեր կուսավորչի էջմիածնի զավակների, և թարգմանված է Հայերենից վրացերեն ի ձեռն Գորեցի Գեորգ Վարդապետի, ի թվականության 436 [=1748]»:

Եւրոպի գլուխը պարունակում է ճառեր Գրիգոր կուսավորչից և ներսես Շնորհալուց, ինչպես նաև Կյուրեղ Աղեքասանդրացուց՝ ընդդեմ բոլոր հերձածողաց, որոնց (ճառերին) կցված է այսպիսի ուշագրավ հիշատակարան. «Թարգմանված է Հայերենից վրացերեն ի ճեռն Գորեցի Գեորգ Վարդապետի, ի վայելումն Հայաստանյաց Եկեղեցու զավակների, որոնք հայերեն չեն հասկանում»: Նշանակում է, որ թարգմանիւմ՝ Գեորգ վարդապետը՝ այստեղ ի նկատի ունի վրացախոս Հայերին կամ, ծայրահեղ դեպքում, Հայագավան վրացիներին:

Վերջապես, շորջուր (և վերջին) գլուխը պարունակում է ճառեր ներսես Լամբրոնացուց, որոնք «զրի են առնված ի ճեռն Գեորգ անարժանական վարդապետի»:

Բայց այս, ժողովածուում պատվավոր տեղ է հատկացված մէջքերումներին Ղազար Զահկեցու Հակաճառությունից («Դրախտ ցանկալի»-ից):

Այսպիսով, պարզ է, որ իր ժողովածուն կազմելիս և Հայերենից վրացերենի վերածելիս Գեորգ Կակաբենցը ձեռքի տակ է ունեցել Գրիգոր կուսավորչի, ներսես Շնորհալու, ներսես Լամբրոնացու, Գրիգոր Տաթևացու, Ղազար Զահկեցու, ինչպես և Կյուրեղ Աղեքասանդրացու ճառերը, հիշակած Հայ պատմագիրները Երկերը:

Սակայն ժողովածուի կմախը կազմում նա Գրիգոր Տաթևացու ճառերը, քաղված նրա «Գիրք Հարցմանց»-ից և «Թարող-գրքի» Ամուսն Հատորից: Եվ դա միանգամայն հասկանալի է, քանի որ ԺՈ դարում վրաց գրական-գիտական շրջաններում մեծ հետաքրքրություն էր առաջացած դեպի Գրիգոր Տաթևացին, որին լավ ճանաչում էր, ի միջի այլոց, վրաց Անտոն Ա կաթողիկոս

Բագրատիոնի: Բայց այս, Տաթևացու «Քարոզքիրքը» հատկացն թարգմանվել էր իմերեթում¹⁴, ըստ երևովթին, միանգամայն անկախ Գեորգ Կակաբենցի ժողովածուից:

Ընդ ամին, թարգմանությունները Գրիգոր Տաթևացու երկերից կատարված պիտի լինեն, մեր կարծիքով, ո՞չ թե ձեռագիր մատյաններից, որ անշուշտ կլինելին կտուց անապատի և Կարագա վանրի մատենագարաններում, այլ ըստ տպագիր օրինակների, որոնք Գեորգի գործունեության պահին (1740—1750) առկա էին Կոստանդնուպոլսի հրատարակություններով, օրինակ՝ «Գիրք հարցմանց»-ը՝ 1730 թ.¹⁵, որտեղից (էջ 485—486) բառացի թարգմանված է «Թարող Վարդապետին» հատվածը (ըստ ձեռագրի էջ 249—251):

Նոյն պահին նմանապես առկա էր Կոստանդնուպոլսի 1734 թ. հրատարակությամբ Ղազար Զահկեցու (նոյն Ղազար Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս, 1737—1751) «Գիրք աստուածաբանութեան», որ կոչի Դրախտ ցանկալի»-ն, որտեղից (էջ 520—530) բառացի թարգմանված է պապականների գեմ ուղղված հատվածը (ըստ ձեռագրի էջ 341—345):

Այլև ասպարեզի վրա էին, մի կողմից, Կոստանդնուպոլսի հրատարակություններով՝ ներսես Կլայեցու «Եխուս Որդի»-ն՝ 1724 թ., Կյուրեղ Երուսալեմացու «Կոչումն ընծայութեան»-ը՝ 1728 թ., Գրիգոր կուսավորչի «Յաճախապատում»-ը՝ 1737 թ., և մյուս կողմից՝ Հռոմի հրատարակությամբ՝ Կղեմես Գալանոսի «Միաբանութիւն Հայոց Եկեղեցւոյն ընդ Սեծի Սուրբ Եկեղեցւոյն Հռովմայակալուն գործը՝ 1650, 1658, 1661 և 1690 թ. թ., և, վերջապես, Պաղուայի կամ Վենետիկի հրատարություններով՝ այսպես կոչված «Խաչանց թուղթ»-ը՝ 1690 և 1695 թ. թ., որոնց նույնպես ծանոթ է Գեորգը, նաև մի շարք այլ գործեր:

Գեորգ Կակաբենցի ժողովածուում դավանարական բնույթի նյութերի միջև կան նաև նրա լիովին թե կիսով ինքնուրույն գործեր, որոնք կարծես թե չեն խախտում ժողովածուի ընդհանուր ոգին:

14 Մեր հոգված՝ «Տեղեկագիր Վրաստանի պետական թանգարանի», Ժ. էջ 95 և ժամութ. 3 նույնուեղ:

15 Այսաեղ տեղին կլիներ հիշել, որ այս հրատարակությունից, ցեղազուային պալմանների պատճառով, բաց էր թունված «Ծննդէմ Տաճկաց» հատվածը, որը ուղիղ 200 տարի անց լուս ընծայեց թարգեն եպիսկոպոս Կյալեսերյանը (Հետագալում թարգեն Ա աֆոնակից կաթողիկոս Սեծի Տանն Կիլիկիո, 1931—1935) առանձին գրքով՝ «Խուամը Հայ մատենագրության մեջ. Ա. Գրիգոր Տաթևացու ընդդէմ Տաճկաց» [«Աղբային մատենադարան», Ժիդ, Վիեննա, 1930]:

Այս գործերը կարելի է բաժանել երկու խմբի:

Առաջին խումբը տաղերն ու ներբողյան-ներն են, թվով 8, որոնցից միմիայն երկուսն են հայատառ հայերեն, իսկ մնացած վեցը՝ վրացատառ վրացերեն:

Հայերեն տաղերից մեկը, բաղկացած 2 տոնից կամ 8 տողից (էջ 360), նվիրված է Հովհան Ոսկերերանին, որը հորինված է, և Հովհան Ոսկերերանին, որը հորինված է, ինչպես ստորև (ժան. 21) նշված է, Ղազար ջնապետ ներշնչմամբ, եթե ու լիովին, գուն առաջին տոնում: Իսկ երկրորդ տաղը, բաղկացած 4 տոնից կամ 16 տողից (էջ 016), նվիրված է Հիսուսին:

Երկուսն էլ ստորև հրատարակվում են ըստ ձեռագրի:

Վրացերեն տաղերն ու ներբողյանները, որոնք մենք թարգմանել ենք հայերենի, մասամբ տեղափորված են համապատասխան նկարների տակ և հետևյալներն են.

ա. Գրիգոր Տաթևացուն, 3 տող, նկարի տակ (էջ 147):

բ. Հոռմի Սեղբեստրոս պապին և Գրիգոր Կոստավորչին, նաև Կոստանդին Մեծին և Տրդատ թագավորին, դարձյալ 3 տող, նույնպես նկարի տակ (էջ 257):

գ. Գրիգոր Լուսավորչին և Ներսես Լամբրունացուն, դարձյալ 3 տող, նույնպես նկարի տակ (էջ 347):

դ. Վարագա խաչին, 27 տուն=108 տող (էջ 012—015):

ե. Գովասանք վրաց այբբենի, 37 տող (էջ 144—145):

զ. Հիսուսի կենսագործթյունը, 30 տուն=120 տող (էջ 08—011):

Այս տաղ-ներբողյաններից երկրորդը, կասկած չի կարող լինել, ներշնչված է «Գաղանց թուղթ»-ից, որին Գևորգ Կակարենցը ծանոթ պիտի լիներ 1690 կամ 1695 թվականի հրատարակությամբ, տուրք տալով նրան¹⁶, մեր կարծիքով, անդիտակցաբար:

Եղիշը խումբը ճառերն ու քարոզներն են, գրված վրացերեն, որոնք նվիրված են Սուլթան Սալիմին կամ Առաջավորաց պասին (էջ 166—167), Սուազատկին (էջ 228—231), Հայաստանյաց եկեղեցիների տեսությանը (էջ 302—305), նաև այլևայլ պատումներին հայ-վրացական և հայ աղվանից փոխհա-

րաբերությանց անցյալից (էջ 72—73, 257, 266—267, 325—326, 327, 353, 355 և այլն):

Այս գործերն ևս մենք բնագրից վերածել ենք հայերենի:

Գևորգ Կակարենցի ինքնուրուցն ստեղծագործության մեջ պատվավոր տեղ է գրավում Վարագա խաչին նվիրված տաղը, որը, իջարկե, միակը չէ հայ գրականության գանձարանի մեջ, ասել է՝ «Շառագիտական գանձարանի մեջ առաջինն է և ո՞ւ էլ վերջինը»¹⁷:

Անկերն է, որ այս տաղը հորինելիս Գևորգ Կակարենցն օգտվել է նաև անմիջականորեն Վարագա վանքում լաւձ՝ Վարագա խաչի մասին բանավոր գրուցներից և ո՞չ թե գրավոր աղբյուրներից, ինչպիսիք են, օրինակ, Թովմա Արծրունու «Պատմության» Դպրության ԺԲ գլուխը¹⁸, «Յամայմաւորք»-ի համապատասխան հատվածը¹⁹ և այլն:

Միաժամանակ, զորիկ չէ հետաքրքրությունից այն փաստը, որ Գևորգ Կակարենցը, վրաստանցի լինելով հանդերձ, անուշադրության է մատնել Վարագա խաչի մասին եղած զրուցի առնչությունը Վարձիի խաչի զրուցի հետ, որն ակտուալ էր համարվում միջնադարյան հայ գրականության մեջ²⁰,

17 Հիշենք ԺԶ դարի տաղասաց Զաքար Լմեցոց կամ, որն նույն է, Վարագեցու, Խըմքեցու, Գնումայաց եպիսկոպոսի հորինվածը, որ հրատարակել է ներսես վրդ. Ակինյանը («Զաքարիա Գնումայաց եպիսկոպոսի տաղեր», «Հանդես ամսօրյա», 1909 թ., էջ 284—285 [«Տաղ Վարագա խաչին ի Զաքարիայէ Վարագեցու ասացեալս»]): Տյուրինգենի համալսարանի (Գերմանիայում) հայերեն ձեռագրերի ծողովածուում, № 61-ի ներքո, պահպանվել է ոմն «Գէորգեա բան» տաղ Վարագա խաչին, բավական ընդարձակ բռվածքակությամբ, էջ 265ա—267ա («Տյուրինգենի համալսարանի ձեռագրերի ցուցակը», կազմեցին Ֆրանց Նիկոլաուս Ֆինկ և Լևոն Գյանջևյան, Տյուրինգեն, 1907, էջ 94—95, գերմաներեն): Անորոշ ժամանակական և անանուն Եղիշնակի շարագանը «Վարագա խաչ» վերնագրով հրատարակել է Սահակ վրդ. Ամատունի («Հին և նոր պարականուն կամ անվավեր շարականեր», Վաղարշապատ, 1911, էջ 131—132):

18 «Թովմայի վարդապետի Արծրունու Պատմութիւն Տանն Արծրունեաց», ի լու էած Փ. Պ [Պատմանախան], Ս. Պ. Բ., 1887, էջ 306—307: Նույնը հրատ. «Ղուկասյան Մատնեադարան»-ի, ԺԶ, Թբիլիսի, 1917, էջ 498—499.

19 «Յամայմաւորք Տէր Խորացէլի», «Պատրոլոգիա օրինատապիս», Հատոր ի, մասն Ա, Փարիզ, 1930, էջ 94—95 (հայերեն և ֆրանսերեն):

20 Հմմտ. 1. Մելիքսեռ-Թեկ, «Վարդապետը հայոց հյուսիսային կողմանց», Թբիլիսի, 1928, էջ 253 (մրացերեն):

16 Հմմտ. Աշոտ Հովհաննեսյան, «Գրվագներ հայ պատագրական մտքի պատմության», գիրք պատճեն, Երևան, 1957, էջ 79:

ԿԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱԿԱԲԵՆՑ ԳՈՐԵՑՈՒ ՏԱՂԵՐՆ ՈՒ ՌԱՃԵՐԸ

Ա.

ՀԱՅԵՐԵՆ ԲՆԱԳՐԵՐԸ

[Հովհան Ռոկերերանին]

1. Ռոկերերան սուրբ Հայրապետ,
Որ Քրիստոսին աշակերտ.
Գերամաքուր մեծ վարժապետ,
Ջամրէ և ինձ քաղցրիկ քո բատ²¹,

2. Արքեծին լուսաստուեր
Զոր հաւատամք հոգու գրեցեր.
Վասն հաւատոյ աքսորս կացեր,
Տրուալ Քէորդին բարէխօս լեր:

[Փրկչին]

1. Պետն Հրեղինաց արաքեցեր,
Արդանդ մաքուր պատրաստեցեր.
Հոգով Սրբով ներգործեցեր,
ՋԱստուած ընդ մարդ միացուցեր:

2. Ի անբանից մսուր եղար
Եւ ի մոգուցն ընծայեցար,
Ի Հրեշտակաց փառատրեցար
Եւ ի հովուացն յայտնեցար:

3. Արևելեան դուռն բացեր,
Երուսաղէմ քաղաք մտեր.
Ըզծերունին արձակեցեր,
Պարտից մահու ազատեցեր:
4. Ի Յորդանան մկրտեցար,
Հոգով Սրբովն վկայեցար.
Եւ ի Հօրէն դաւանեցար,
Լոյս աշխարհին անուանեցար:

Բ

ՎՐԱՅԵՐԵՆԻՑ ԹԱՐԳՄԱՆՎԱԾ

ա

ՆԵՐԲՈՂՑԱՆՆԵՐ

1

(Գրիգոր Տաթևացու նկարի տակ)

Կես գիշերին դու ելար, արևելյան արեգա'կ,
Պարթևացու դու պարգև, լուսաւորիչ կանթեղի,
Դու՝ վառ ղամբար մեծ Արամյան ազգատոհմի...

2

(Հոռմի Սեղբեստրոս պապի և Գրիգոր Պարքեացու,
նաև Կոստանդին Մեծի ու Տրդաթի նկարի տակ)

Երեք հայրուր տասննութ հայրապետներ, որ կնքեցին այս ժողովը,
Ոչ ոք սուս չկարծի, Աստծուց էր այս կամքը.
Ասացին՝ միագո Երրորդություն, մի բնություն, մի կամք...

3

(Գրիգոր Պարքեացու և Ներսես Լամբրոնացու պատկերի տակ)

Կիւկիայի Տարսոնում բազմի՛ր, նրա միտրոպոլիտն ես,
Քո իմաստությունն ու սրբությունը երկնքից է, Աստծուց,
[Ընդհանրական] հայր ես Հայաստանյայց, լուսավորիչը նրա....

²¹ Այս տոմք հիշեցնում է Ղազար Ջաճկեցու տա-
լը, նվիրված Հովհան Ռոբտնեցուն և Գրիգոր Տա-
թևացուն (Գիրք - աստուածաբարանութեան, որ կուի
Խրախտ ցանկալիք, Կ. Պոլիս, 1734, էջ 8).

«Մեծըն Յօհան Ռոբտնեցին վարժապետ,
Սուլրըն Գրիգոր Տաթևացին աշակերտ,
Ցորոց շառաւիղեալ Ղազար վարդապետ,
Որ զայս գիրքը մանկանց Եկեղեցւոյ ետք».

F

[Տաղ Վարագա Խաչին]

1. Ամեն մի շնչավոր կարոտ է քեզ, լյա՛ռն Վարագա,
Կայան հրեշտակաց, ապաստան խաչի.
Թրիստոսը Թարորի վրա բազմեց, և նրա խաչը՝ քեզ վրա,
Դու՛ տապանն Մովսիսի և Աթոռ մեր Աստուծու:
2. Եկա քեզ երկրպագելու, աշտարա՛կ խաչի,
Քեզ վրա բացվեց դուռը բարձր կապուտ երկնի.
Երբ տամն կերկու լուսավոր մայր-սյուները պատեցին քեզ,
Հոփիսիմեն քեզ պահ տվեց կտորը սուրբ խաչի:
3. Ծնկալոք երկրպագում եմ, Համբուրում եմ քեզ դառն արցունքով,
Դու, որ սատանային կոփի տվիր քո մեծ ուժովն,
Լուսինը կրծքիցը քեզ կախեց, այստեղ հասցրեց վզովը,
Ֆունկստանից շնորհ քերիր, հոժարակամ իշար ժայռի վրա:
4. Ո՞ր լեզվով է վայել քեզ գովել, լյա՛ռն Վարագա,
Այն խաչը քեզ վրա բազմեց, որ սուրբն է Աստուծու,
Ինձ այստեղից մի՛ վերադարձնիր, թուզլ տո՞ւր մնամ մի օր ևս,
Ո՞չ ուտել և ոչ խմել կուզեմ, թո՞ւր լիզեմ քո ավազը:
5. Վրաստանից քեզ դիմեցի մեծ սիրով,
Երկար ճանապարհ անցա շատ զրկանքներով.
Հենց որ եկա ու տեսա քեզ, խիստ ուրախացա սրտով,
Եղ երբ եկա սարի վրա, լցվեցի քո հոգվովը:
6. Երնեկ սպանես-շարշարես, միայն քեզնից չհեռանամ,
Ով էլ Թարթի կգնա, թո՞ւ հետը տանի քո հողիցդ,
Ես այստեղից չեմ գնա, շնորհ պիտ գտնեմ քեզանից,
Թե որ մեռնեմ, ինձ վրա թափեն մի բուռ ավազ քեզանից:
7. Քո ժայռերը նման են Բաբելոնի աշտարակին,
Ոսկով են նկարած գեղեցկատեսիլ եկեղեցիքդ.
Սրանց շուրջը ծաղիկների բուրաստան է՝ քեզանից,
Թվում է՝ դրախտի հինգ աղբյուրներն են հոսում քեզանից:
8. Արժանի է աշքով տեսնել քո ներքելի վանքը,
Ցոթն մեծ զանգակատուն յոթն մեծ եկեղեցիների.
Քառասուն վանական համախմբված անուշ ձայնով երգելիս,
Դալար այգին և պարտեզը շրջակա կալվածի:
9. Խաշած վանքերն, ասում են, սքանչելի են կառուցված,
Սրանցից մեկում աղոթեց Գրիգորը, որ Պարթևացի է կոչվում,
Այժմ մեծ մենաստան է, հոշակավոր՝ ասում են,
Հարավային կողմում, քեզնից ցած, ձորում՝ ասում են:
10. Հյուսիսային կողմում Հոփիսիմեի գանգի վանքն է,
Արևմտյանն կոչվում է Վանք Շուշանա թագուհու.
Արևելքում դու ես բազմած, քո մեծ մենաստանը,
Մեջտեղը՝ Մենեքերիմի վանքն յոթ եկեղեցուց բաղկացած:
11. Առջևից ունիս բերդ և քաղաք կրկնակի պարիսպներով,
Միջում սքանչելի տուն ու տեղեր տասնումեկ եկեղեցիներով.
Շուրջը՝ դաշտ ու լեռներ վեց հազար գյուղերով,
Առջևից ծովը և նրանում յոթ հարյուր նավ վանքապատկան:

12. Խաշն օրհնել է քո լեռը, ասում են՝ ծաղկած է,
Կարմիր-դեղին-հունի գույն, լաջվարդի նման են ասում,
Բարձրաբեր ժայռերը մարդկանց համար ահարկու,
Մեկը Գալիխ է կոչվում, խաչի կայան են ասում:
13. Զյունապատ ես, հոտավետ, վարդով զարդարված,
Երշակա վանքերը դալամով նկարած.
Քարթիթից եկա, քեզ դիմեցի մեծ հավատքով,
Թե օրը տասն անգամ քեզ մոտ գամ, շեմ կշտանա քո տեսքով:
14. Քո ժայռի տակը թո՛ղ մեռնեմ, արժանացրո՛ւ քո տեսքին,
Մուրազը սրտումս շմնա, այլևս ախ չքաշեմ.
Լուսավորյալ քարերն համբուրեմ, շուտ-շուտ վայ տալով,
Ոչ ոք ինձ լրամբասե, շասեն՝ շտեսավ այս:
15. Ժայռի տակին նստած եմ և երգ իմ ասում հույժ դառն արտասվալից,
Երնեկ երբ կարժանանամ քեզ տեսներու իմ աշրովս.
Կամ ինչպէ՞ս համարձակվեմ ոտնատակ անեմ քո հողը,
Երբ արժանի եղա համբուրել քեզ անարժան բերնովս:
16. Հոփիսիմե՞ն, ոսկեծնունդ, որու Սուրբ Նինոյի քույրն ես,
Բոյով դու չինար ես, դրախտի վարդի նման ես.
Գորիթից եկա այս լեռան վրա, կուզեմ հոգֆով ինձ ավետես,
Մրտով այսպես ուրախ եմ, որ դու այստեղ կանգուն ես:
17. Ի՞նչն ինձ սիրով կկշտացնի, քանի որ այստեղ եկա,
Ո՛չ ուտել և ո՛չ խմել կուզեմ, ոչ էլ հեռանամ այստեղից.
Դու, որ Ֆուանկստանից եկար ու բազմեցիր այս տեղում,
Սուրբ Խաչը դրած է ժայռի գլխին այս տեղում:
18. Դու, մեծ Սուրբ Գևորգ, արևելքու արեգական,
Լուսու պսակ, տկարների բժշկող.
Հեծյալ անվախ, սատանային կոխ տվող,
Սովից վիշապ հանող, Խորասանի գերիներին ազատող:
19. Լուսավորիչն Գրիգոր, Հայաստանյայց հայրապետն,
Տասներկու տանջանքներ նա հանձն առավ մեզ համար.
Կուռքերից մեզ ազատեց, երկնավոր Աստվածն ուսուցեց մեզ,
Փրկության ավազանից Երրորդության որդի կոչեց մեզ:
20. Եկեղեցի մեզ կառուցեց մեղքերը քավելու,
Սատանային կոխ տվող, կենդանացնող մեր հոգվոց.
Միածինն իշավ, հետն՝ խորանն լուսո,
Խոզացած արքային վաթսուն հինգ օրում բժշկեց:
21. Նիկիայում ժողով արին նրա կնիքով կնքելով,
Արիստակեսին ուղարկեց մասնակցելու Նիկիայում.
Հավատամքն այնտեղից շնորհեցին մեզ, որով կրոնը հաստատվի,
Հոր համագո խոստովանեցին Քրիստոսին՝ Աստուծով օծյալին:

(Մնացած 22—27 տուները զուտ դավանարանական բնույթ են կրում և
զուրկ են թե՛ պատմական և թե՛ գրական նշանակությունից, ուստի և չենք
թարգմանել— Լ. Մ.-Բ.):

Գ

[Առաջավորաց պասը]

հնդիւ է, որ ֆուանգները և հուկները հայ-
հոյում են մեզ (Հայերիս), ասելով՝ մարդու
համար եք պատ պահում, [այն] որ Սուրբ
Սարգսի պատ է կոշվում [և որն] ուրիշ քրիս-
տոնյաները չունին. մինչդեռ դուք պահում
եք իշապան Սարգսի պատը:

Այսպիսիներին կպատասխանեմ նախ-
«Կեղծավոր», հա՞ն նախ զգերանդ յականէ
քումէք, և պատ հայեցիս հանել զշիդն յա-
կանէ եղօր քո» [Մատթ. է 5]: Իրենք պատ
չունին, բոլոր պատերն եղծեցին որկրամո-
լովիչամբ և ձուկն ուտելով և ալլայլ պիղծ
գործողությամբ, և պատ ասում եք, թե մենք
մարդու [համար] պատ շենք պահում ը-
նունիսկ չգիտենք, թե իշապան Սարգսին
ո՞վ է: Ով իշապան Սարգսի պատը պահի,
նա ևս տասներկու առաքյալներից նզով-
յալ լինի, և ով էլ այդ կամի ու սուտ կհնարի,
նա էլ նզովյալ լինի Առաքելական Սուրբ Ե-
կեղեցու կողմից: Կաթողիկե Սուրբ Եկեղե-
ցին Հայաստանյաց [Եկեղեցին] է, որ հիմ-
նը ված է Քրիստոսի վեմի վրա, և այսպիսի
անօրինություն նրան [Հետեւողների] մըտ-
քովն երբեք չի անցնի: Սակայն ե՛կ և նրանց
շար լեզուներին համառոտ պատասխան
տանք:

Մեր Սուրբ Եկեղեցու սահմանումն այն է,
որ պահում ենք շաբաթվա պատը, տոնը շենք
տոնում (՝), քանի որ պատը մեղքի ողբն է
և տոնը հոգու որախությունը: Ինչպես
հայտնի է, չորեքշաբթի և ուրբաթ օրն երբեք
տոն շենք կատարում, եթե Ամենասրբութու
տոնը լրնկնի, և Մեծ պատին էլ շաբաթից
զատ շենք տոնում. սակայն երբ շաբաթն
ուտիս ենք անում, որևէ սրբի տոնն ենք
կատարում: Այս պատճառով, եթե հինգ օր
պատ պահեցինք մեր մեղք [եր]ը քավելու
համար, որ սրբի տոնն էլ կատարում ենք,
նրան միջնորդ ենք հանում Աստուծո առաջ,
որպեսզի նրա բարեխոսությամբ մեր պատն
ընդունելի լինի, և այս մի ամսվա ընթաց-
քում ինչ որ մեղք ենք գործեն, հինգ օրվա
մեր պատը հինգ զույգ նշանով [Աստված]
մեզ ողորմություն պարգևե: Ուրեմն պարզ է,
որ մարդու համար շենք պահում [պատը],
այլ մեզ համար և Աստուծո համար ենք
պահում:

Սակայն բոլոր պատերն անունով են ճա-
նաշվում, ինչպես Մեծ պատի կյուրակեներն
Սուրբ Թեոդորոսի, Կյուրեղի, Գրիգորի, Ղա-
զարի պատեր ենք անվանում և նրանով ենք
ճանաշում, որ ի վերջո նրանց տոնն ենք
տոնում, ինչպես որ [այս] պատը Սուրբ
Սարգսի պատ ենք կոշում:

Այս Սարգսիը Թեոդորոս Կոստանդնուպոլ-
սի թագավորի արքունապետն էր: Եվ երբ
պիղծ զրաբարտող Հովհանոսը թագավոր
դարձավ, սա (Սարգսիը) թողեց [Կոստանդ-
նուպոլիսն լի եկավ Պարսից երկիրը Շապուհ
թագավորի մոտ և նահատակվեց Մազան-
դարանում Քրիստոսի կրոնի համար: Մենք
նրա տոնն ենք կատարում, չենք ճանաշում
ձեր ասածը Սարգսի մասին: Մենք նզովում
ենք ո՛չ միայն այդ [զրպարտությունը] հի-
շատակողին, այլև հավատացողին ու ընդու-
նողին:

Այժմ գանք և տեսնենք, թե այս պատն
ի՞նչպես է կոշվում և ինչպես սահմանվեց
այն:

Այս պատը կոշվում է Առաջավորաց: Թեկ
անտաշ [և] տգետ ցեղերը Սուրբ Սարգսի
[պատ] են կոշում, սակայն նշենք, թե
ինչու է Առաջավորաց կոշվում: Այս պատը
պահեց Արամը դրախտից դուրս գալուն
պիս. պահեց Սեթն Արամի մահից հետո:
Այս պատը պահում էր Արելը, որն և մա-
տաղ էր զոհաբերում: Ենովքը պահեց հինգ
օր իրեն համար: Նոյն պահեց այս պատը
տապան մտնելու և դուրս գալուն պիս: Ար-
րահամը պահեց, երբ Խաչակրին զոհելուց
խուսափեց: Կրկին պահեց Արրահամը Սո-
դոմն ու Գոմորը այրվելուց հետո: Պահում
էին բոլոր առաջնեկները, երբ հայրը վախ-
ճանվում էր: Մովսեսը սահմանեց Խրայի-
լացոց՝ հինգ օր պատ պահել հորթի համար:
Հակոբը պահեց, երբ տեսավ, թե ինչպես
սանդուղքը ցից դրված հասնում էր մինչ
երկինք: Կրկին պահեց, երբ հայտնվեց
Հովսեփը: Հովսեփը պահեց այս պատը, երբ
արգելանցուումն էր: Պահեցին [և] նինվե-
ցիք, [երբ] Հովհան մարգարեի քարոզի
շնորհիվ հինգ օր անճաշակ [մնացած] ազատ-
վեցին զայրույթից: Եվ կա վկա, որ այս
պատին ընթերցվածք չեն կարդում, ո՛չ Հին
և ո՛չ Նոր [Ուկստից] և ուրբաթ [օրը] Հով-
հան մարգարեից ընթերցվածքն են կարդում:
Ուրեմն Սարգսի պատ չէ այս [պատը], այլ
[ուրիշ]: Այս պատը որ սահմանվեց, այն
ժամանակ ոչ զիր կար և ոչ էլ ընթերցվածքը
[Ս. Գրիգոր]: Այս պատճառով մենք ևս շենք
կարդում: Խակ երբ Սուրբ Սարգսիը նահա-
տակվեց Պարսկաստանում, [հենց] այս շա-
բաթի [միջում] եղավ նրա նահատակու-
թյունը, ուստի և այստեղ են կատարում նրա
հիշատակությունը (օրը):

Մեր լուապորիչն՝ Սուրբ Գրիգոր Պար-
թևացին [քրիստոնեական] հավատի դարձ-
րեց Հայաստանը և վաթսուն հինգ օր քա-
րոզեց, և խոզ դարձած արքան (Տրդատ

թագավորը — Լ. Մ.-Բ.) սրանից հետո բուժվեց և բոլորին հրամայեց հինգ օր անճաշակ մնալ: Այս սա է Հայաստանյայց առաջին պատր: Այս պատճառով Առաջավորաց [պատ] ենք կոչում²²:

Երկրորդ Սուրբ Սեղբեստրոսը, որ Կոստանդնու թագավորին [քրիստոնյա] դարձրեց և մկրտեց, հրամայեց թագավորին և ամբողջ ժողովրդին հինգ օր պաս պահել, Եվ երբ Գրիգոր [Լուսավորիչը] գնաց Ֆունկների երկիրը, այս պասն այնտեղ վավերացրին երկրոյան պատրիարքները՝ Սուրբ Գրի-

գորն և Սեղբեստրոսը: Նրանք (Ֆունկները) թե՛ այս և թե՛ իրենց [պատրիությունը] կորցրին որովայնամոլովթյամբ, իսկ մենք մերը պահեցինք:

Եվ ի՞նչ կա զարմանալի, որ հայոցում են [մեղ], երբ նրանք չորեքարթին ունին՝ իբր թե առաքյալներից սահմանված: Եվ եթե Մեծ պատի երկու օրն ուտիս ունին՝ իբր Քրիստոսից սահմանվածն, ի՞նչ զարմանալի բան է, որ մյուս պատերն ել ուտեն: Ողորմելիները չգիտեն, որ մի ձու և մի ոչխար ուտելը պատի [միջոցին] միւսուլնն է...:

¶

[Սուպատիկը]

... Թամար թագուհու օրոք մեծ վեճ տեղի ունեցավ վրացիների և հայերի միջև: Այն պահին՝ 1197 թվականին՝ եղավ Սուպատիկ²³: [Եվ] այդ ժամանակն էր հայ իշխան Զաքարիա կոչեցյալը (լուսանցքում ավելացրած է «Այս Զաքարիան Հաղբատումն է թաղված»), որ, իհարկե, սխալ է. պիտի լինի՝ Սանահնում — Լ. Մ.-Բ.), որը բարեպաշտ էր և մեծահոչակ, Թամար թագուհու որդիգիրը²⁴, Եվ այս վեճի պատճառով թագուհին իր պալատականներից մեկին, վրաց ազնվականին, ուղարկեց Երուսաղեմ: Մեկին էլ Զաքարիան ուղարկեց յուրայիններից հայուն: Եվ գնացին սրանք երկրոյան ճշմարտություն պարզելու համար: Եվ այս Զատկի ճշմարիսի և ծուոփի ճանաշողը կուսավորի կանթեղն

²² «Առաջավորաց»-ը, ըստ մեր տեսության («Հովհաննես Վանական Տափուշեցու անտիպ երկերից, Պատճառք Առաջաւորաց պահոցն», «Եղմիածին», 1959 թ. № 6, էջ 35—44, մասավանդ 40—41), պիտի յեկնարանել ոչ թե տառաջ՝ բարից, այլ տառչուց»-ից:

²³ «Սամուէլի քահանալի Անեցոյ Հաւաքմոնք ի գրոց պատմագրաց», հրատ. Արշակ Տեր-Միքելյան, Վաղարշապատ, 1893, էջ 145: Հատուկ գրականությունը այս խնդրի շուրջը՝ Լ. Մելիքսեր-Բեկ, «Շուպազատիկի առթիվ 1197 թվականին Թբիլիսիում տեղի ունեցած երկառակության մասին», «Կովկասյան պատմա-հնագիտական ինստիտուտի Տեղեկագիր», III, Թբիլիսի, 1925, էջ 49—60 (ռուսերեն), Խոյենի «Վարդապետը հայոց հյուսիսային կողմանց», Թբիլիսի, 1928, էջ 238—249 (վրացերեն), Խոյենի «Վարդապետը աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», II, Երևան, 1936, էջ 16—20, 28—31: Խոյենի «Հին Թբիլիսիի և հայ-վրացական կուլտուրական կազերի պատմությունից», «Պատմա-բանասիրական հանդես», 1958 թ., № 3, էջ 154: Խոյենի «Մամիթար Գոշի անտիպ երկերից», «Եղմիածին», 1959, № 12, էջ 43 և ծանոթ. 10—14:

²⁴ Հավանական է «մինամակալված»-ի իմաստով — Լ. Մ.-Բ.:

²⁵, որ ամենից առաջ ոչ մարդու ձեռքով, Աստուծոն հրամանով կվառվի ամեն Զատկի շարաթ գիշերը²⁵: Սակայն [Քրիստոսի] գերեզմանն այն ժամանակ էլ (1197 թ.— Լ. Մ.-Բ.) թուրքի²⁷ ձեռին էր, և նա, որ գերեզմանի վերահսկողն էր²⁸, նկատեց քրիստոնյաների իրարանցումը, հարցրեց քրիստոնյաներին, թե ե՞րբ է ձեր Զատիկը: Հուները պատասխանեցին, թե Զատիկը այս կիրակի է, իսկ հայերն սասցին, որ այս կիրակի չէ, [այլ] մյուս կիրակի է: Բայց այն վերահսկող թուրքը խելոք մարդ էր: Հրամայեց տաճարում եղած բոլոր կանթեղներն ու մոմերը հանգնեն: Փակեց դուռն և իր կնիքով կնքեց ու ոչ ոքի շթողից ներս, որպեսզի տեսնի, թե ճշմարտությունը ո՞ր ազգի [Կողմն] է: Եվ երբ որ օրն անցավ ու մթնեց կանթեղի վառվելուն էին սպասում, և ժամանակն էլ անցավ ու այն շվառվեց, վերահսկողը հրամայեց իր բոլոր ժառաներին ծեծով, տուրուղմբոցով և հայոցանքով դուրս

²⁵ «Հուսավորչի կանթեղ»-ի թեման հայ գրականության մեջ, ինչպես հայտնի է արծարծված է՝ սկսած Սիմեոն կարդինալից («Քամբոյ»), ապա Պետք Պոռշյանի («Եւս և Վարդիթեր»), Մ. Նալբանդյանի («Կրիտիկա») մատ, նաև նույն վերնագիրը կրող բանաստեղծություններում՝ Հովհաննես Հավանենիայանի, Հովհաննես Փումանյանի, Վահան Թեմեյանի, Հովհաննես Շիրազի և այլոց:

²⁶ Հմատ. Մերատ Մերատյան, «Հուսաւորեա»-ի հանդես յերուսաղէմ», «Յարազ», 1898 թ., № 14, էջ 247—281:

²⁷ Այստեղ և ստորև մենք «Թուրք» ենք թարգմանում վրաց «Թաթարի»-ն — Լ. Մ.-Բ.:

²⁸ Այս առթիվ նորայր եպիկոպոս Պողացյանը («Համառոտ ակնարկ հայ Երուսաղեմի վրա», «Եղմիածին», 1951 թ., № 4—6, էջ 90 (գրում է. Ա. Հարուբյան տաճարին բանալին կդանելի ժառանգաբար՝ մահմեդական որոշ ընտանիքներու ձեռքը, որոնք սահմանյալ ժամանուն կրանան և կդոցին»:

թշել: Եվ երբ այն կիրակին անցավ և եկավ մյուս կիրակին, որի մասին հայերը ասում էին, թե Զատիկ է, նորից փակեցին դուռն ու կնքեցին, և շաբաթ երեկոյան տասներորդ ժամին, երբ ժամասացություն էին կատարում, նկատեցին, որ կանթեղն, առանց մարդու ձեռքը նրան մոտենալու, վառվեց: Մեծ ուրախություն ընկավ հայերի և մանավանդ թուրքերի մեջ, որոնք ուրախացած էին, որ այս սբանչելիքը տեսան և գովարանում էին հայոց հավաքը և պահարակում հովաներին, որոնց կեղծ և ստախոս էին անվանում: Եվ այս բոլոր եղիյությունը տեսան թամար թագուհու [ուղարկած վրացադավան] մարդը և Զաքարիա իշխանի [ուղարկած հայադավան] մարդը, որոնք վերադարձան [Վրաստան] և հաղորդեցին թագուհուն: Եվ թագուհին ևս խիստ գովեց հայ ցեղը: Եվ մեծ խրախճանք ու պարգևատրություն սարքեց հայ իշխանը, և [բոլորն] էլ ավելի հաստատուն մնացին հայոց ճշմարիտ հավատի մեջ: Այս հին

դեպքը որ նշեցի, սա տեղի ունեցավ Հայոց 545 (ուղիղ՝ 646=1197—Լ. Մ.-Բ.) թվականին:

Այժմ նոր բան ասեմ, որ մեր օրոք եղավ: Երբ վրաց քոնիկունն էր 417 [-1729], ապրիլի 6-ին շեղավ վրացոց Զատիկը և մեր Սաղկազարդը. իսկ մեր Զատիկին էր ապրիլի 13-ին: Օսմանցիք գրաված ունեին Քարթին: Եվ ինչպես վերոգրյալ [դեպքը] ում, [այժմ էլ] հովաները ստվեցին: ...Այս [բոլորը] գրեցի նրա համար, [որպեսզի] ով որ այն ժամանակ [վա պատմությանը] ծանոթանա, տեսնի և համոզվի: Աստվածաշնչի վերջումն էլ գրված է, [այն օրինակում,] որ Հեթում թագավորն է գրել, որ նրա օրոք ևս եղել է Մոսափատիկ: Այսպիսի բան արավ այն անհիջալ իրինան²⁹: Ո՛չ հովանի մեղքն է և ո՛չ էլ հայի: Երկուսն էլ անմեղ են: Մեղքն իրինայինն է, որը նախանձով շեղեց [հովաներին] և ինքն էլ շեղվեց:

Ե

[Հայաստանյաց եկեղեցիները]

Ասում ենք, որ բոլոր առաքյալների միշեամենից առաջ մեր Բարդուղիմենոս առաքյալը շինեց Անձևացյաց երկրում, որ այժմ Շատախին կոչում, [եկեղեցի] հանուն Աստվածածնին, որը հետագայում Մ. Գրիգոր [Լուսավորիչ] ին ուղեց քանդել ու [նրա տեղը] կառուցել մեծը, բայց լքանդեց ու կողքին մի ուրիշ եկեղեցի կցեց, որն այժմ էլ մեծ վանք է: Մինչեւ Թաղենոս առաքյալի [կառուցած] եկեղեցիներին հաշիվ չկա: Իսկ Գրիգոր Պարթևացու օրոք եկեղեցիների թիվն ավելի ևս բազմացավ: Սուրբ Գրիգորը շինեց՝ էջմիածինն ու Հոփիսիմեի վանքը, և Գայանեն ու Շողակաթը, Սուրբ Կառապետը՝ Թուրքատանում և Կոտուց անապատը քաղաք Վանի ծովում, որտեղ ես եմ գտնվում ու գրում եմ այս գիրքը, [նաև] շինեց Ուլքիլիսան³⁰:

²⁹ Խոսքը բարգանդական կայսրութիւն երինայի կամ երիների (Ծրանուռու) մասին է, որի օրոք (787 թ.) գումարված Նիկույի երկրորդ տիեզերական ժողովը վերականգնեց պատկերաբարգությունը: Տե՛ս Արհատական հավիսկ. Սեղրակյան, «Հայաստանյաց եկեղեցու պատկերագրությունը. Պատմական տասություն, մասն Ա», Ս. Պ., 1904, էջ 36 և այլն: Մազարիս արքեպիսկոպոս. Օրմանյան, «Աղջապատում», Ա, էջ 904—908:

³⁰ Այսինքն՝ Բագրևանդի Հռվիճաննավանք — Լ. Մ.-Բ.:

31 Այսինքն՝ կաթոլիկ Կոնքս Գալանոսը և նրա սովոր երկասիրությունը՝ «Միաբանութիւն Հայոց Սուրբ Եկեղեցուն ընդ մեծի Սուրբ Եկեղեցուն Հռովմայ», հատ. Ա—Բ. Հռովմ, 1850, 1858, 1861 և 1890:

Սրանից հետո ներսես Մեծը հինգ հարյուր վանք և անապատ շինեց: Ինչպես Կղեմհսն³¹ է վկայում, Սուրբ Ներսիսի օրոք Հայաստանում 2040 վանք է եղել: Եվ դրանից հետո էլ, որքան թագավորներ ու կաթողիկոսներ էին զահ բարձրանում, բոլորն էլ շինում էին: Բագրատունիք Անի քաղաքի շրջակալիքը լցրին եկեղեցիներով: Ինչպես գրված է, Անի քաղաքը մեկ պակաս³² եկեղեցի է եղել: Եվ Սենեքերիմյանք Վան քաղաքի շրջակայրում [կառուցին] Աղթամարի մեծ վանքը, որն այս ծովին մեջն է: Եվ Վարդպատրիկը շինեց հազար^(*) եկեղեցի հանուն Սուրբ Ստեփանոսի: Ռուրինյանք ևս Կիլիկիայի երկրում [շինեցին եկեղեցիներ], որոնցից շատերն այս օր էլ կանգուն են և շատերն էլ ավերված: Եվ Վաշագան Աղվանից թագավորն ու նրա իշխանները Գյանշայի երկիրն ու Դաղստանը լցրին եկեղեցիներով, որոնցից են հողակավոր վանքերը Սղնախում³³: Գանձասարն ու Ամարասը, և Սուրբ Եղիշե առաքյալի գերեզմանն ու վանքը: Եվ Փոքը Հայաստանում³⁴ Հաղբատն ու Սանահինը և շատ ուրիշները [կառուցին], որ անհար է թվարկել:

³² Ուգեցել է ասել՝ հազար և մեկ—Լ. Մ.-Բ.:

³³ Այսինքն՝ Արցախ-Ղարաբաղում—Լ. Մ.-Բ.:

³⁴ Այսինքն՝ Հյուսիսային Հայաստանում կամ, որ նույն է, Կորիկայն Հայաստանում (Զաքարյան կամ, ավելի ճիշտ ասած, Խորովլյան Հայաստանում)—Լ. Մ.-Բ.:

Հապա նրանց (հունադավանների — և. Մ.-Բ.) եկեղեցիների հետ համեմատած մի՞թե քիչ են մեր եկեղեցիները: Իսկ եթե առում են, որ մենք [եկեղեցիներ] շունինք, դա այն պատճառով է, որ [մեր եկեղեցիների] մի մասն ավեր է և մյուսն էլ թուրքերի ձեռին է³⁵: Հապա նրանց եկեղեցիներից ավելի շատ է ավերվածը և թուրքերի կողմից գրավվածը: Հետևապես նրանք առավել ևս

շունին [եկեղեցիներ]: Սակայն Հովհան Դամակեցին³⁶ հեռու է [ը] Հայաստանից, և Հայոց երկրը չէ [ը] տեսել, և այնպես էր կարծել, որ [հայերս] եկեղեցիներ շունինք: Իսկ եթե շտեսնելու պատճառով է, որ չէ [ը] հավատում, որ եկեղեցիներ ունինք, հետևապես անհավատ մարդ է եղել: Չէ՞ որ՝ ոչ ոք Աստուծուն չի տեսել, սակայն հավատում ենք, որ Աստված կա:

4

[Այլեալ պատումներ]

ԹԱՂՎԱԾՔՆԵՐ

1

Դաբրիել վրաց միտրոպոլիտը տասնեհինգ եպիսկոպոսներով եկավ Պարտավ (բնագրում՝ Բարդա — և. Մ.-Բ.) մեր [հայոց] Բարգեն կաթողիկոսի և Զաքարիա Աղվանից կաթողիկոսի մոտ, և նզովեցին երկու բնություն ասող[ներ] ին ու Քաղկեդոնի ժողո-

վլու³⁷: Հապա այնպես եք կարծում, որ միմիայն մենք [հայերս] ըլնդունեցինք: Ուրեմն ազգ[եր]ի եպիսկոպոսապետներից է նզովված Քաղկեդոնի ժողովը և ո՛չ թե միմիայն հայերից:

2

Ինքնազլուխ մի[ակ] կաթողիկոսը նստում է Հայաստանում, և նա օծում է Աղվանից թագավորին ու կաթողիկոսին և Վրաց թագավորին ու կաթողիկոսին ("), քանի որ աղ-

վանները Թագեսու առաքյալի աշակերտից են քրիստոնյա դարձել, իսկ վրացիք՝ Սուրբ Կույս Նինոցից:

3

Երբոր Սուրբ Գրիգորն ու Տրդատ թագավորը Ֆուանկների երկրից վերադարձան, եկավ Գաղատանի Գեղրովան թագավորը և ավերեց Վրաստանն ու 20 000 գերի տա-

րավ³⁸: Հենց որ Տրդատ թագավորն ու Սուրբ Գրիգորը այս իմացան, շատ նեղացան և թագավորը 40 000 զորք ուղարկեց [նրանց օգնության]:

4

Եթե կնոջ ձեռքով մկրտվելը հետևանք էր անելանելի [դրության], հապա սուրբ և երանելի նինոն ինչո՞ւ չմկրտեց վրացինե-

րին..., այլ մարդ ուղարկեց Սուրբ Գրիգորի մոտ և խնդրեց, որ նա քահանա տար նրանց (վրացոց) մկրտելու համար³⁹:

35 Տե՛ս վերև 27-րդ ժանոթագրությունը
36 Հունադավանության սյուն է դարձում (վախճ. 749—750 թ. թ.), որի երկասիրությունները հայտնի են թե՛ վրացերնեն (Կորն. Կելինիան), «Օտար հեղինակները վրաց հին գրականության մեջ», «Թբիլիսիի պետական համալսարանի Տեղեկադիր», VIII, էջ 156—158, Խոյնի «Վրաց հին գրականության պատմությունը», I, թ. տպ., Թբիլիսի, 1941, էջ 627—629 և թե՛ հայերնեն (Գ. Զարբանալյան), «Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց», Վենետիկ, 1889, էջ 575—580):

37 Այստեղ պատմական դեպքերն ու աշխարհագրական ավալները շփոթված են, քանի որ խոսքը վերաբերում է 506 թվականին կայացած ժողովին Դվինուա-

և ո՛չ թե Պարտավում: Բացի սրանից, Զաքարիա Աղվանից կաթողիկոսը հայոց Բարգեն և վրաց Գրիգորի կաթողիկոսների ժամանակակիցը չէր:

38 Այստեղ, անկասկած, նկատվում է մեր հեղինակի ժանոթությունը Զենոռ Գևակի պատմության հետ, գուցեց հենց Կոստանդնուպոլիսի 1719 թվականի հրատարակությամբ («Գրիգոր պատմութեանց երկրին Տարօնոյ, որ կոչի Զենոռ», էջ 29, հմմտ. Յովհան Մամիկոնեան, «Պատմութիւն Տարօնոյ», հրատ. Աշոտ Արքանալյան, Երևան, 1941, էջ 129), ուր հիշված է «թագաւորն հիւսուոյ... Գեղուեհուոյ»:

39 Այստեղ մեր հեղինակը ցուցաբերում է ժանոթություն Մովսես Խորենացու Պատմության Բ գրքի 86 գլուխ հետ, որի ներշնչմամբ էլ գրել է այս տողերը: